ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*08 սեպտեմբերի 2022թվականի N 828*

## *ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.*
*1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,*
*2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 1 /մեկ/ հատ,*
*3) հանրային սննդի կազմակերպման և իրականացման ՝ 2 /երկու/ հատ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*08 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. սեպտեմբերի 08-ի
N 828 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Գոհար Դանիելյան | ք.Երևան, Լուսավորչի 6-րդ փողոց, շենք 16, բնակարան 35 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 221 շենք, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Գոհար Դանիելյան | ք.Երևան, Լուսավորչի 6-րդ փողոց, շենք 16,բնակարան 35 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 221 շենք, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Կարեն Նալբանդյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 94/9 | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 129/1-129/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Արմեն Բարսեղյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 40ա | Երևան-Սևան 44 կմ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Արմեն Բարսեղյան | ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 40ա | Երևան-Սևան 44 կմ | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 6. | ԱՁ Գոռ Գալստյան | ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 58/37 | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ ֆիզիկոսներ 13 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական ճշինություն | 2022 թվականի 2-րդ կիսամյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *ՈՐՈՇՈՒՄ*

*08 սեպտեմբերի 2022թվականի N 829*

### *ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Գարիկ Դավթյանի 2022 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 26-րդ շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Գարիկ Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 16062022-07-0104, ծածկագիր՝ AWJ2JSDBDCIK, N 03062022-07-0061, ծածկագիր՝ KAKKSWPAFD4K, N 07082017-07-0049, ծածկագիր՝ NZSUTT7YVEPT և N 28082020-07-0060, ծածկագիր՝ HKA1LQN6UQJU/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 4-րդ փողոց 19/1, 19/2, թիվ 19/3 և 19/5 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց 19/1:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*08 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*08 սեպտեմբերի 2022թվականի N 830*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՍԻ, ԾԱԾԿԱՐԱՆԻ, ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 25-ին «Հարշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022UWGHR6 ծածկագիրը և Էնգել Գևորգյանի 2022 թվականի հուլիսի 27-ի դիմումը.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան խճուղի թիվ 09 բնակարանի բնակիչ Էնգել Մացոյի Գևորգյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան խճուղի 1-ին նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 1175495, տրված՝ 2005 թվականի նոյեմբերի 18-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցված 149.32քմ արտաքին մակերեսով մասը՝ օրինականացման վճարը սահմանել 294 100 (երկու հարյուր իննսունչորս հազար մեկ հարյուր) դրամ, ինքնակամ կառուցված 63 . 91քմ արտաքին մակերեսով ծածկարանը՝ օրինականացման վճարը սահմանել 125 900 (մեկ հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր) դրամ, 19.56քմ մակերեսով աստիճանավանդակը՝ օրինականացման վճարը սահմանել 38 520 (երեսունութ հազար հինգ հարյուր քսան) դրամ, ինքնակամ բացած պատուհանը՝ օրինականացման վճարը սահմանել 2 000 (երկու հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի՝ թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*2.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու*

առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 սեպտեմբերի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*09 սեպտեմբերի 2022թվականի N 831*

## *ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Նելլի Էքսերջյանի 2022 թվականի սեպտեմբերի 05-ի դիմումը.*

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1. Սամվել Թադևոսյանին (ներկայումս հանգուցյալ, մահվան վկայական II-ՄЮ N694820, տրված՝ 2003 թվականի փետրվարի 28-ին) պատկանող Հրազդան քաղաքի Վանատուր նոր թաղամասում գտնվող բնակելի տանը (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2188088, տրված՝ 2006 թվականի հունիսի 30-ին) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Պուրակային փողոց, 2-րդ նրբանցք 9:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*09 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*09 սեպտեմբերի 2022թվականի N 832*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կարեն Մաթևոսյանի 2022 թվականի սեպտեմբերի 09-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 5-րդ շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Կարեն Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1852894, տրված՝ 2004 թվականի նոյեմբերի 25-ին) Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս, Ամառային փողոց, 2-րդ նրբանցք 2:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*09 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*09 սեպտեմբերի 2022թվականի N 833*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գառնիկ Հարությունյանի 2022 թվականի սեպտեմբերի 05-ի դիմումը.*

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

*1.Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 12-րդ թաղամասի թիվ 71 տան բնակիչ Գառնիկ Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2173434, տրված՝ 2004 թվականի ապրիլի 30-ին) Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 4-րդ փողոց, 6-րդ նրբանցք 17:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*09 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*09 սեպտեմբերի 2022թվականի N 834*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Լուկաշ Մաթևոսյանի 2022 թվականի սեպտեմբերի 09-ի դիմումը.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

*1.Երևան քաղաքի Արաբկիր 17-րդ փողոցի 27 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Լուկաշ Մաթևոսյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 07-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N2493-ով, ժառանգական գործ 59/ Հրազդան քաղաքի Կենտրոն Ա-6 թաղամասում գտնվող հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 07-001-458-016) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկ պողոտա 69/3:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*09 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*09 սեպտեմբերի 2022թվականի N 835*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Գայանե Ֆրանգյանի 2022 թվականի սեպտեմբերի 05-ի դիմումը.*

## *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Երևան քաղաքի Նոր Նորք 8-րդ զանգված 30 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Գայանե Ֆրանգյանին ժառանգության իրավունքով փոխանցված /22 Երևան նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի օգոստոսի 22-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում N 5131-ով, ժառանգական գործ 181/ Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 07-001-636-143) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Խանցյան փողոց 69/1:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*09 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*12 սեպտեմբերի 2022թվականի N 836*

## *ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 սեպտեմբերի 2022թվականի N 837*

### *ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Շահեն Հունանյանի 2022 թվականի օգոստոսի 29-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>*՝

*1.Համաձայնեցնել կառուցապատող Շահեն Միերի Հունանյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի Հայ Ֆիդայիների փողոց թիվ 58/1 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 17032017-07-0036, ծածկագիր՝ 35IB5NXZTFRS) առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** *[signature]* **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*13 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՁԵՎ N 2-3
ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հրազդան համայնքի ղեկավարի
2022թ.սեպտեմբերի 13 -ի N938 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ**
**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ**

**N 91 13 սեպտեմբեր 2022թ**

Տրված է կառուցապատող *ՇԱՀԵՆ ՀՈՒՆԱՆՅԱՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ մարզ, գյուղ Սոլակ, 4-րդ թաղամաս, տուն 18*

*Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց թիվ 58/1* հասցեում

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի (բազմանկյուն երկհարկանի շինություն), Միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտ՝ /II կատեգորիա/ օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

*կառուցման* շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ______ տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են *«ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ, տնօրեն Ա. Անդրեասյան,*

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

*Արտոնագիր՝ ՃԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007* կողմից,

(լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) ______ թ. N ______ փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները) ______

(նշել փորձաքննության տեսակը)

______ կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ *«ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ կողմից 08.08.2022թ.-ին տրված N 440/22*

(Նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների *Հրազդանի համայնքապետարան կողմից 13.09.2022 թ.* հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել *13 սեպտեմբեր 2022 թ.- 13 սեպտեմբեր 2023 թ.* ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի ձևակերպման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[ ] ավարտական ակտի տրամադրումից <u>մեկ ամսվա</u> ընթացքում,[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:

3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

______________________________ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել
իրավասու մարմնի ______________________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ
մարմինների ______________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝

1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) ______________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ______________________________
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ ______________________________
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 սեպտեմբերի 2022թվականի N 838*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ԾԱԾԿԻ, ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2022 թվականի հունիսի 21-ին «Հարշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022HD7CNY ծածկագիրը և Ռոբերտ Եղիազարյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 314 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչներ Ռոբերտ Ռազմիկի և Նարինե Լադիկի Եղիազարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2519413, տրված՝ 2008 թվականի փետրվարի 25-ին) Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 107/2:*

*2.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 314 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչներ Ռոբերտ Ռազմիկի և Նարինե Լադիկի Եղիազարյանների կողմից Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 107/2 հասցեում գտնվող ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2519413, տրված՝ 2008*

*թվականի փետրվարի 25-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված հետևյալ շինությունները.*

*1) 225.88քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ օրինականացման վճարը սահմանել 294 000 (երկու հարյուր իննսունչորս հազար) դրամ,*

*2) 66.58քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ օրինականացման վճարը սահմանել 87 000 (ութսունյոթ հազար) դրամ,*

*3) 29.97քմ մակերեսով անասնաշենքը՝ օրինականացման վճարը սահմանել 39 000 (երեսունինը հազար) դրամ,*

*4) 4.85քմ արտաքին մակերեսով ծածկը՝ օրինականացման վճարը սահմանել 6 400 (վեց հազար չորս հարյուր) դրամ,*

*5) 0.19քմ արտաքին մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 300 (երեք հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:*

*3.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:*

*4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:*

*5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:*

*6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*13 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 սեպտեմբերի 2022թվականի N 839*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 03-ի №742 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

*1. Հայաստանի Հանրապետության Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 03-ի «Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» № 742 որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին»:*

*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*13 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*13 սեպտեմբերի 2022թվականի N 840*

*ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.*
*1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝4 /չորս/ հատ,*
*2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,*
*3) հանրային սննդի կազմակերպման և իրականացման ՝1 /մեկ/ հատ,*
*4) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի ՝1 /մեկ/ հատ:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*13 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. սեպտեմբերի 13-ի
N 840 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ԱՁ Վարդուհի Գալստյան | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս, տուն 405 | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս 405 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 2. | ԱՁ Վարդուհի Գալստյան | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս, տուն 405 | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս 405 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 3. | ԱՁ Գայանե Համբարձումյան | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, տուն 26 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, տուն 26 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 4. | ԱՁ Գայանե Համբարձումյան | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, տուն 26 | Կոտայքի մարզ, գյուղ Քաղսի, 1-ին փողոց, տուն 26 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 5. | ԱՁ Լաուրա Ղազարյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 240/19 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 240 շենքին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | մինչև 2022 թվականի հուլիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 2-րդ կիսամյակի համար |
| 6. | ԱՁ Լաուրա Ղազարյան | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 240/19 | ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 240 շենքին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | մինչև 2022 թվականի հուլիսի 01-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 2-րդ կիսամյակի համար |
| 7. | ԱՁ Քրիստինե Մարտիրոսյան | ք.Հրազդան, Մաքրավան Ա-4 թաղամաս | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի 23/26 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 8. | ԱՁ Քրիստինե Մարտիրոսյան | ք.Հրազդան, Մաքրավան Ա-4 թաղամաս | ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Օգոստոսի 23/26 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2022 թվականի 3-րդ եռամսյակի համար |
| 9. | ԱՁ Արթուր Գաբրիելյան | Կոտայքի մարզ, գյուղ Լեռնանիստ, 7-րդ թաղամաս, շենք 43,բնակարան 4 | Կոտայքի մարզ, գյուղ Լեռնանիստ, 7-րդ թաղամաս,թիվ 40/1 | խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 սեպտեմբերի 2022թվականի N 841*

### *ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արծրունի Հակոբյանի 2022 թվականի սեպտեմբերի 08-ի դիմումը.*

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 131 շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Արծրունի Հակոբյանին պատկանող (Հրազդան համայնքի ղեկավարի կողմից տրված Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1993 թվականի մարտի 16-ի թիվ 53 որոշման քաղվածք) Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող 0.2հա տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 125/3:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*14 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*14 սեպտեմբերի 2022թվականի N 842*

### *ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Արծրունի Հակոբյանի 2022 թվականի սեպտեմբերի 08-ի դիմումը.*

### *<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 131 շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Արծրունի Հակոբյանին պատկանող (Ժողովրդական պատգամավորների Հրազդանի Քաղխորհրդի գործկոմի 1991 թվականի հուլիսի 26-ի արձ.6 քաղվածք) Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող 0.04հա տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 390/4:*

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

*14 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 սեպտեմբերի 2022թվականի N 843*

## *ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Նվեր Նաղդալյանի 2022 թվականի սեպտեմբերի 09-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 123 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Նվեր Նաղդալյանին սեփականության իրավունքով պատկանող /այգեգործի անդամատոմս N 555, տրված՝ 1991 թվականի մարտի 17-ին/ Հրազդան քաղաքի Աղբյուրակ այգեգործական զանգվածում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս, Այգեգործական զանգված, 4-րդ փողոց 25:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*14 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*14 սեպտեմբերի 2022թվականի N 844*

*ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Մանվել Սիմոնյանի լիազորված անձ Էդվին Սիմոնյանի 2022 թվականի սեպտեմբերի 08-ի դիմումը.*

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>՝*

*1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Մանվել Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1208872, տրված՝ 2004 թվականի դեկտեմբերի 09-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքին հարող տարածքում գտնվող ավտոտնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 98/5:*
*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:*

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

*14 սեպտեմբերի 2022թ.*
*ք.Հրազդան*